ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ԴԵՄԻՐՉՅԱՆԸ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ

03.04.2019 12:09

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 21.01.2019թ. թիվ 2/7-Ա որոշմամբ փաստաբան, փաստաբանների պալատի խորհրդի անդամ Տարոն Վարդանի Սիմոնյանի փաստաբանական գործունեության թիվ 1092 արտոնագրի գործողությունը կասեցվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տարոն Վարդանի Սիմոնյանն ընտրվել է Հայաստանի Հանրապետության 7-րդ գումարման ազգային ժողովի պատգամավոր:

ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.4 կետի համաձայն փաստաբանների պալատի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ անդամի փոխարեն ներգրավվում է փաստաբանների պալատի խորհրդի անդամների վերջին ընտրության տվյալներով վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած փաստաբանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 03.04.2019թ. թիվ 139-Ա որոշմամբ արձանագրվել է, որ ***ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի 12.02.2017թ. թիվ 2-Խ արձանագրության 5-րդ կետի համաձայն վարկանիշային հաջորդ առավել «կողմ» ձայներ ստացած և որպես ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ ներգրավվելու համաձայնություն ներկայացրած փաստաբան Գայանե Ասատուրի Դեմիրչյանը (203 ձայն, 16-րդ տող) 2019 թվականի ապրիլի 2-ից (գրավոր համաձայնությունը ներկայացնելու հաջորդ օրվանից) համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կազմում Տարոն Սիմոնյանի փոխարեն՝ վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:***

ՀՀ փաստաբանների պալատը շնորհակալություն է հայտնում փաստաբան Տարոն Վարդանի Սիմոնյանին՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդում ծավալած արդյունավետ գործունեության համար:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 03.04.2019թ. թիվ 139-Ա որոշումը.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })